



**ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ
ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ**


ՀՈՒՆԻՍ 2018 թ.

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

2018թ. հունիս ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են տիֆեր, պարատիֆեր, սիբիրյան խոց, կատաղություն, խոլերա, ռիկետոցիոզներ, փայտացում, դիֆթերիա, սուր պոլիոմիելիտ:

Հարուկ վրանգավոր վարակներ

Բրուցելոզ



Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետությունում 2017-2018 թթ հունվար-հունիս ժամանակահատվածում արձանագրված բրուցելոզի դեպքերը


Գծապատկերի տվյալները վկայում են այն մասին, որ հանրապետությունում 2018թ. հունիսի ընթացքում արձանագրված բրուցելոզի դեպքերը նախորդ ամսվա հետ համեմատ աճել են 3 անգամ: 2017թ. նույն ժամանակահատվածի հետ համեմատ նվազել է 1.9 անգամ: 2018թ. հունիսի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է բրուցելոզի 34 դեպք, որից 8-ը՝ Արարատի, 7-ը՝ Գեղարքունիքի, 5-ը՝ Արմավիրի, 3-ը՝ Արագածոտնի, 3-ը՝ Կոտայքի, 2-ը՝ Վայոց Ձորի մարզերում: Յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ կենդանիների շրջանում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու համար:

Աղիքային վարակիչ հիվանդություններ

Հայաստանի Հանրապետությունում 2018թ. հունիս ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 1082 դեպք, որից 372 դեպքն արձանագրվել է Երևան քաղաքում, 710-ը՝ մարզերում: 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ աղիքային վարակներով հիվանդացությունը աճել է մոտ 1.1 անգամ:

Հիվանդացության աճը հիմնականում դիտվել է Երևան քաղաքում մոտ 1.5 (ավել է 123 դեպքով) անգամ, ինչը բացատրվում է հունիս ամսին հաստատված խիստ շոգ եղանակով: Մարզերում հիվանդացությունը 2018թ. հունիս ամսին աննշան նվազել է՝ 2017թ. հունիս ամսվա համեմատ (պակաս է 13 դեպքով):

Միևնույն ժամանակ հունվար-հունիս ժամանակահատվածում աղիքային վարակներով հիվանդացությունը աննշան աճել է 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատ (դեպքերի թիվը աճել է 217-ով):



Գծապարկեր 2 Հայաստանի Հանրապետությունում 2017-2018 թթ հունվար-հունիս ժամանակահատվածում արձանագրված աղիքային հիվանդությունների դեպքերը

2018թ. մայիս ամսվա համեմատ (885 դեպք) աղիքային վարակիչ հիվանդությունների դեպքերի թիվը աճել է 197 դեպքով:

Արձանագրված աղիքային վարակիչ հիվանդությունների օջախներում իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ և հակահամաճարակային միջոցառումներ՝ վարակի հետագա տարածումը և բռնկումների առաջացումը կանխարգելելու նպատակով:


2018թ. հունիս ամսին Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 1 բռնկում: 2018թ. հունիսի 22-25-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի «Գուլիվեր» մանկական ակումբում արձանագրվել է շիգելոզի բռնկում: Հիվանդների թիվը կազմել է 33, որից 32-ը մանկապարտեզի սան է՝ 3-6 տարեկան, մեկը՝ նույն մանկապարտեզի խոհարար: Հիվանդների և կոնտակտավորների լաբորատոր հետազոտությունների արդյունքում 25-ի մոտ լաբորատոր հաստատվել է շիգելոզ, որից 10-ը շիգելա զոնե տեսակի հարուցիչը: Բոլոր օջախներում իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ, հակահամաճարակային միջոցառումներ՝ կոնտակտավորների, շրջակա միջավայրի օբյեկտների լաբորատոր հետազոտություններ, օջախների եզրափակիչ ախտահանում,

իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում և առողջ ապրելակերպի քարոզչություն:

Օդակաթիլային վարակներ

Գրիպ և Սուր շնչառական վարակ

2018թ. հունիս ամսին շարունակվել է արձանագրվել սուր շնչառական վարակներով (այսուհետ՝ ՍՇՎ) պայմանավորված հիվանդության ցածր ակտիվություն: ՍՇՎ դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել են 1.3 անգամ: 2018թ. հունիսին հիվանդացության ցուցանիշը 2017թ. նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել են՝ 1 անգամ, 2016թ. հետ՝ 1.2 անգամ, պայմանավորված հանրապետությունում շրջանառող գրիպի և այլ սուր շնչառական վարակների հարուցիչների բազմազանությամբ: Առավել շատ դեպքեր շարունակվում են արձանագրվել են 0-4 տ երեխաների շրջանում:




Գծապատկեր 3. 2017-2018 թթ. հոկտեմբեր – հունիս ամիսների ընթացքում արձանագրված սուր շնչառական վարակների ցուցանիշն ըստ ամիսների 100 000 բնակչի հաշվարկով

Հունիսի ընթացքում գրիպի դետրային համաճարակաբանական հսկողության շրջանակներում, գրիպանման հիվանդություններից և ծանր սուր շնչառական վարակներից հետազոտվել է 75 նմուշ: Լաբորատոր հետազոտության արդյունքում արձանագրվել է գրիպի Ա տեսակի H1N1 ենթատեսակի 5 դեպք, ռինովիրուսի՝ 2, ադենովիրուսի՝ 1, պարագրիպի՝ 1, մետապնևմովիրուսի 1 դեպք: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է գրիպի Բ-ի 5 դեպք, պարագրիպի 1 դեպք:

Օդակաթիլային այլ վարակներ (ջրծաղիկ, քուրեշ, վարակային մոնոնուկլեոզ)

Ջրծաղիկ




Գծապատկեր 4. Հայաստանի Հանրապետությունում 2017 և 2018 թթ հունվար-հունիս ժամանակահատվածում արձանագրված ջրծաղիկ դեպքերը

Համաձայն վերլուծության տվյալների, 2018թ. հունիսին արձանագրված ջրծաղիկ դեպքերը նախորդ ամսվա համեմատ հետ նվազել են 1.4 անգամ, 2017թ նույն ժամանակահատվածի հետ՝ աճել 1.1 անգամ: Կազմակերպ օջախներում ևս նկատվել է դեպքերի նվազում: Ինչ վերաբերում է ջրծաղիկի տարածվածությանը հանրապետությունում, ապա պատկերը հետևյալն է՝ Երևան քաղաքում՝ 771 դեպք, Կոտայքի մարզում՝ 150 դեպք, Արարատի մարզում՝ 108 դեպք, Արմավիրի մարզում՝ 89 դեպք, Լոռու մարզում՝ 91 դեպք: 2018թ. հունիս ամսվա ընթացքում հղիների շրջանում արձանագրվել է հիվանդության 14 դեպք: Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ԱՆ մոր և մանկան վարչություն՝ հետագա հսկողությունը կազմակերպելու նպատակով:

Առավել շատ դեպքեր՝ (87.6%) արձանագրվել են 0-18տ, որից (52.7%) 3-6տ. երեխաների շրջանում՝ կազմակերպ հաստատություններում: Ընտանեկան և կազմակերպ օջախներում հնարավորինս առաջին դեպքերը մեկուսացվում են և հսկողություն է սահմանվում հիվանդի հետ շփված երեխաների նկատմամբ:


Քույթեշ



Գծապատկեր 5. Հայաստանի Հանրապետությունում 2017և 2018 թթ.հունվար-հունիս ժամանակահատվածում արձանագրված քույթեշի դեպքերը

Գծապատկերի տվյալները վկայում են այն մասին, որ 2018թ. հունիսին արձանագրված քույթեշի դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել են 1 անգամ, 2017թ. նույն ժամանակահատվածի հետ աճել՝ 1.3 անգամ: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 3-6 տարեկան երեխաների շրջանում՝ 64 դեպք, ինչը կազմում է ընդամենի 86 %-ը: Դեպքերի 81.0%-ը արձանագրվել է քաղաքաբնակ բնակչության շրջանում, պայմանավորված մարդկանց ավելի սերտ շփումով: Բոլոր դեպքերն ենթարկվել են համաճարակաբանական հետազոտության, որի նպատակն է հնարավոր վարակի աղբյուր հանդիսացող հիվանդության ջնջված ձևերով հիվանդների հայտնաբերումը, կանխելով վարակի հետագա տարածումը:

Վարակային մոնոնուկլեոզ



Գծապատկեր 6. Հայաստանի Հանրապետությունում 2017 և 2018թթ հունվար-հունիս ժամանակահատվածում արձանագրված վարակային մոնոնուկլեոզի դեպքերը

Ինչպես երևում է գծապատկերից 2018թ. հունիսին արձանագրված մոնոնուկլեոզի դեպքերը նախորդ ամսվա համեմատ նվազել են են՝ 1.3 անգամ, իսկ 2017թ. նույն ժամանակահատվածի հետ աճել՝ 1.1 անգամ: Արձանագրվել է վարակային մոնոնուկլեոզի 55 դեպք, որից 48-ը՝ (87.2%) 0-18 տարեկան երեխաների շրջանում:

Իմունականիսարգելում

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով իրավիճակը բարենպաստ է: Գրանցվել է կապույտ հազի 20 դեպք չպատվաստած և թերի պատվաստված երեխաների շրջանում:

1 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը հունիս ամսին կազմել է 90.5% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 2 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 93,1% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 7 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 95.8% (նպատակային ցուցանիշը՝ 90%):

Բնակչության շրջանում պատվաստումներում ընդգրկվածության բարձր ցուցանիշների շարունակական ապահովումը կնպաստի հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով բարենպաստ համաճարակային իրավիճակի պահպանմանը:

Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ

Հայաստանի Հանրապետությունում հունիս ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտաընդերային սուր վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշը նվազել է 1.3 անգամ:

Սույն թվականի հունիս ամսին արձանագրվել է արտաընդերային սուր վիրուսային հեպատիտի 3 դեպք: Վարակման հավանական պատճառներն են՝ սեռական (պատահական սեռական կապեր ՌԴ-ում) ճանապարհը և բժշկական (ատամնաբուժական՝ ՌԴ-ում) միջամտությունը:

Սննդային թունավորումներ

Հանրապետության տարածքում հունիս ամսին արձանագրվել է սննդային թունավորման 18 դեպք՝ 28 տուժածով, առանց մահվան ելքի, որից բոտուլիզմի 1 դեպք՝ 1 տուժածով, սնկից թունավորման 13 դեպք՝ 22 տուժածով, ստաֆիլակոկային սննդային թունավորման 2 դեպք՝ 2 տուժածով, այլ մանրէային ծագման սննդային թունավորման 1 դեպք՝ 2 տուժածով և ծիրանի կորիզից թունավորման 1 դեպք՝ 1 տուժածով: 0-14 տարեկան երեխաների շրջանում արձանագրվել է թունավորման 3 դեպք՝ 4 տուժածով: Սննդային թունավորման դեպքերը արձանագրվել են ք.Երևանում, Արարատի, Արմավիրի, Լոռու, Կոտայքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում: Բոտուլիզմի պատճառ է հանդիսացել տնային պայմաններում պահածոյացված կանաչ լոլիկը, սնկից թունավորման պատճառ է հանդիսացել տուժածների կողմից հավաքած սունկը, ստաֆիլակոկային սննդային թունավորման և այլ մանրէային ծագման սննդային թունավորման պատճառ է հանդիսացել հավի գրիլը և խառը սննդի օգտագործումը: Սննդային թունավորման դեպքերի վերջնական ախտորոշումը դրվել է համաճարակաբանական տվյալների և կլինիկական նշանների հիման վրա:

Սննդային թունավորման դեպքերի կանխարգելման նպատակով օջախներում իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում՝ սննդային թունավորումների առաջացման պատճառների, կանխարգելման հիմնական սկզբունքների վերաբերյալ: Սննդային թունավորումների կանխարգելման վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար իրականացվում է քարոզչություն:

Քիմիական թունավորումներ

Հայաստանի Հանրապետությունում հունիս ամսվա ընթացքում արձանագրված քիմիական թունավորումների 38.4%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 61.6%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը (27.8%) առաջացել է դեղամիջոցների՝ ծնողի անուշադրության հետևանքով և ինքնաբուժման նպատակով օգտագործման արդյունքում, 15.7%-ը՝ օրգանական լուծիչներից, մասնավորապես՝ շմուլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից, 21.3%՝ թունավոր կենդանիների խայթոցի արդյունքում, 20%-ն՝ ավիոհոլային թունավորումները՝ ավիոհոլի բարձր չափաբաժինների ընդունումից, 6.9%-ն՝ օճառների և լվացող նյութերի թունավոր

ազդեցությունից, 0.9%-ը՝ խոտաբույսերից, 0.5%-ը՝ թմրամիջոցներից, 5.1%-ը՝ թունաքիմիկատների և 1.8%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից:

2018թ. հունիս ամիսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատելիս, կարելի է դիտարկել, որ քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նվազել է 1 անգամ: